մարաւոր է առաջին հասակում սկսել։

Գլ. 8։ Մանուկները ուսումնարանների և կըրթութեան կարօտութիւն ունին։

Գլ. 9։ Ուսումնարաններում երկսեռի մանուկները միասին պէտք է կրթուին։

Գլ. 10։ Ուսումնարաններում ուսումը պէտք է ընդհանուր լինի։

Գլ. 11։ Մինչև այսօր դեռ ուսումնարանները չեն համապատասխանում իւրեանց նպատակին։

Գլ. 12։ Ուսումնարանները կարող են բարեկարգուիլ։

Գլ. 13։ Ուսումնարանը բարեկարգուելու է, երբ ամենայն բան ճշտութեամբ կ'կարգաւորուի։

Գլ. 14։ Ուսումնարանի ճիշդ կարգաւորութիւնը պէտք է բնութեան կարգաւորութեան նըմանի։

"Միւս հետևեալ գլուխները (15-33) ճառաբանում են, թէ ի՞նչպէս --- --ել և ----ել անվրէպ յա---ջողութիւնամբ. դասատուութեան դէրին հիմնաւոր, ամենայն և ամենադիպ եղանակի կանոնների մասին, — գիտութեանց, ճարտարութեանց, լեզուների և բարոյական կրթութեան ոգեղէն մասին, — կրօնի -- կանոնի մասին, ուսումնարանների աստիճան առ աստիճան բաժանման մասին, ընդհանուր ---ական կրթի մասին և այն պայմանների մասին, որոնք հարկաւոր են այս բոլոր պահանջմունքները կատարելու համար։

"Այժմ ընթերցողներին ծանօթացնենք այս գրուածքի գլխաւոր պարունակութեան հետ, առանձին առանձին գլուխներից ծաղկաքաղ անելով։

(Շարունակելի)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ի ԲԵՌԼԻՆ։

Գերմանիոյ 18-րդ "Ընդհանուր մանկավարժական ժողովին" ներկայ գտանուող չորս հազարի չափ անդամներէն, որք անցեալ տարուայ մայիս ամսին՝ դրեթէ ամեն լուսաւորեալ երկիրներէն գումարուած էին Բեռլին, միեն ևս ևս էի լսելու բերմամբ։ Ինչ որ ասուած էր այդ ժողովի մէջ, Եւրոպական լրագիրներն՝ արդէն վաղուց հնչեցին 'ի լուր աշխարհի, բայց մեր ազգային լրագիրներէն՝ որքան ինձ յայտնի է, դեռ ոչ միեն հաշիւ տուաւ նորա մասին. ուստի ես համարձակութիւն կառնում նա և պարտք կը համարիմ, գէթ համառօտ բանիւք տեղեկութիւն մը գրել այդ ժողովի վերաբերմամբ։

Եթէ ընդհանրապէս ճշմարիտ է, որ Գերմանացիք աշխատասէր են, ապա ճշմարիտ է նաև՝ որ այդ ազգի զանազան դասերէն ուրիշ ոչ միեն գուցէ աւելի արժանի է այդ գովեստին՝ ինչպէս Գերմանական ուսումնականաց դասը, որոյ ինքնաղոհ անձնուիրութիւնը ուսման և ջանասէր եռանդը պարապման մէջ արդէն բովանդակ աշխարհին յայտնի առակ դարձած է։ Ակսեալ ամենաբարձր ուսումնարաններէն, որք բազմաթիւ համալսարաններու մէջ գիտութեան դժուարագոյն խնդիրները լուծելու կը ճգնին, մինչև ամենայնտին գիւղական զաւրոցի վարժապետը, որ գիտութեան -ոյթ և բնոյթը միայն կաւանդէ աշակերտներուն, ամէնքը իրենց սուրբ կոչման կարևոր խորհուրդը միապէս կը հասկանան, ամէնքը կաշխատին հաւասար փութով լոյս տարածել ուր և որչափ որ կարելի է, և ամէնքը մի դրօշ ունին, որոյ վրայ գրուած է, ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՓՐԿՈՒԹԻՒՆ Է, ՏԳԻՏՈՒԹԻՒՆԸ— ԿՈՐՈՒՍԷ։ Այդպէս նոքա միաբան կազմեն ազգի վրայ, և թէ մեծ քաղաքներու և թէ հեռաւոր փոքրիկ գիւղերու մէջ հանապազ կը քարոզեն, թէ՝ "Այս դարս ուսում կը պահանջէ մեզմէն, խելք, միտք, գիտութիւն, և թէ՝ առանց ուսման մարդավայել կեանք և բախտ չըկայ"։ Իրրև անձնուէր աղդասէր պաշտօնեայք՝ նոքա ոչինչ չեն խնայեր իրենց ազգի մտաւոր և նիւթական յառաջադիմութեան համար, և զարմանալի արիութեամբ՝ և նոյնդուսակ փութով նախ ինքեանք կուսանին, և ապա օր և գիշեր հնար կ'որոնեն գիտութեան գանձերը ընդհանուր սեփականութիւն շինելու, վարեն մինչև վեր բովանդակ ազգին հաղորդելու, որպէս զի հայրենիքն անկիրթ զաւակ չունենայ։

Այն ազգը, որի մէջէն անդադար այդպիսի մարտիրոսներ կը յառնեն խաւարի դէմ մարտնչելու, չէ կարող 'ի հարկէ լիով մասամբ չը յարգել ուսման գինը. և իրաւ մեք կը տեսնենք, որ ոչ մի Եւրոպական ազգ այնքան հոգ ունի լուսաւորութեան վերայ, ինչպէս Գերմանացւոց ազգը, որոց համար վարժարանը — սրբարան է, կարևոր, անհրաժեշտ հիմնարկութիւն՝ նա և սակաւամարդ չքաւոր գիւղի մէջ. Ուր որ ազգը կարող է վարժարան հիմնել, նա ինքը կը հիմնէ. ուր որ կարող չէ—տէրութիւնը կ'օգնէ նորան. և այդպէս ընդհանուրի գործակցութեամբ ամենայն տեղ ուսումնարաններ կը բացուին, և նոցա բարեկարգութեանը համար փութապէս խնամ կը տարուի. Այդ վարժարաններու թիւը ոչ թէ տասնեակներով, հարիւրներով, այլ հազարներով պէտք է համրել, և ո՞վ կարող է ասել, թէ որքան լոյս, բախտ, երջանկութիւն կը ծաւալի նոցա միջնորդութեամբ համօրէն ազգի մէջ. և թէ որքան ոգիք կը փրկուին նոցա շնորհիւ՝ սնապաշտութեան, տգիտութեան և թշուառ աղքատութեան կորստաբեր ճանկերէ՞ն.

Գուցէ ցանկալի կը լինէր ընթերցողիս, եթէ ես Գերմանական մանկավարժներուն գովեստ կարդալէս յետոյ, խօսքերս ապացուցանելու համար՝ յառաջ բերէի այստեղ Պեստալոցցու, Գրեօրլի, Կարլ Շմիդթի, Դիստերվեգի պէս տիեզերահռչակ մանկավարժից արդիւնաւոր գործունէութեան նկարագիրը, ու ցոյց տայի Գերմանական դպրոցի անցեալն ու ներկայն. այլ երկնչելով՝ որ այդ շատ կը հեռացնէր զիս արդի փոքրիկ յօդուածիս նպատակէն, ես կուզեմ այս անգամ միայն ընտրած խնդրոյս վրայ ամփոփել ասելիքս.

Վերը ասացի, որ ամենաբարձր ուսումնականներէն սկսեալ մինչև ամենայնտին գիւղական դպրոցի վարժապետը՝ մէկ գործի կծառայեն, և առ մի նպատակ կը դիմեն. Բայց Գերմանական վարժապետներու թիւը հարիւր հազարէն շատ աւելի է, և նոքա ընդ սփիւռս տարածուած են Հայրենեաց ամեն կողմերը. ուրեմն ի՞նչպէս կարող են նոքա միութիւն պահպանել իրենց մէջ, և միշտ վառ պահել իրենց եռանդը ազգային գործի յաջողութեան համար, Երանի՞ այն վարժապետին, որ մեծ քաղաքի մէջ կապրէ. այնտեղ նա կարող է միշտ լուսաւորեալ հասարակութիւն գտնել, ամենայն օր իր ընկերները տեսնել, նոցա հետ վարժարանի և իր պաշտօնին վերաբերեալ խնդիրներու վրայ խորհրդակցիլ, արդի ժամանակս հիմն ի վեր ալէկոծող կենդանի հարցերու լուծումը լսել, մեր օրերու արգասաւոր կեանքի երակները անմիջապէս շօշափել, իր միտքը հանապազ հարստացնել, և հաղար ու հաղար եղբայրներու արթուն գործունէութեան մէջ աշխոյժ սիրտ առած, դէմքը զուարթ ընդհանուրին միանալ, ու նոցա հետ յառաջ դիմել. Բայց ի՞նչ անէ այն ողորմելի վարժապետը, որ միայնացեալ փոքրիկ քաղաքի՝ և կամ մեծ ճանապարհներէն հեռու, անանց լեռներու տակ ընկած սակաւամարդ գեղջուկի մէջ՝ պարտաւոր է իր պաշտօնը վարել. ո՞ւր գտնէ նա իրեն օգտաւէտ խորհրդատու, իր մտքերն և տենչանքը բաժանող ընկեր, որն որ դժուար բոպէներուն օգնութեան աջ և սփոփանք կրնար տալ նորան. Այդ հեռաւոր մութ անկիւններու մէջ, ուր լուսաւորութեան նշոյլները տակաւին նոր սկսած են թափանցել, վարժապետի գործունէութեանը ձեռնտու միջոցներն ու պայմանները դեռ շատ սակաւ են, և նա անօրինակ սէր պիտի ունենայ իր գործի համար, որ չը վհատի բիւր դժուարութեանց առջև, և իր վեհ նպատակը աչքէ չը կորցնէ. Դենենք, որ նա երկչոտներէն չէ, այլ այն անվեհեր քաջերէն մէկն է, որ բոլոր իրենց կեանքը վարժարանին զոհած, միայն նորա օգտի համար կապրին աշխարհիս վերայ. սակայն և այնպէս նա մարդ է, և իրրև մարդ անզօր՝ հազարաւոր պաշտօնակիցներէն միանգամայն բաժանուած, ինքն իր հանձարով միայն եկք գտնել դպրոցի ներքին և արտաքին կեանքի մէջ օր ըստ օրէ ծագող անթիւ կնճիռներէն՝ և դժուարաղցած խնդիրներէն. Արդի մանկավարժութիւնն ու կեանքը այնպիսի ծանր պահանջմունքներ դրած են դպրոցի ու վարժապետի վերայ, որ եթէ վերջինս ազնուութեամբ պաշտօն վարելու կամենայ, հարկաւ կըստիպուի խոստովանիլ, որ միայն իր խելքով նա անձեռնհաս է այդ բարձր պահանջմունքներուն լիովին յարմար ընթացք բռնելու և որ նորան անշուշտ օգնութիւն հարկաւոր է.

Սիրելի ընթերցող, երբ որ մեք Հայերս՝ որ և է բանի անհրաժեշտ հարկաւորութիւնը իմանանք, —Այո, իրաւ այդ հարկաւոր է՝ կը կանչենք մեք. ՆՈՐ ԼՈՒՍ՝ կը լինէր՝ կըսենք մեք, թէ որ այս ինչ ու այն ինչ սկսինք։ Սակայն ամիսներ կ'անցնին և բանը չի յառաջանար, մեք վերստին կը կանչենք,—ամիսներ չէ, տարիներ կ'անցնին, դարձեալ բան մը չի կատարուիր. ժամանակը նետի պէս կը սլանայ—կը թռչի, կորստեան վիհը ժամ առ ժամ կը մօտենայ, իսկ մեք միայն կը կանչենք, և աշխարհիս վրայ այնպիսի սարսափելի անդունդ վիհ, գիշատիչ գազան մի չկայ, որ կարող լինէր երկիւղ ազդել մեր քաջ սրտերուն, և ստիպէր վերջապէս բուռն արկանելու փրկաւէտ գործին։

Գերմանացիք և առհասարակ Եւրոպացիք այդպէս չեն. նոցա համար պէտք է, որ հասարակային բանի մի հարկաւորութիւնը մէկ անգամ հասկացուի. 'ի զուր կոչելու և վայելու ժամանակ չունին նոքա—իսկոյն գործ կըսկսին և միաբան, արթուն և ժիր աշխատութեամբ կը կատարեն՝ ինչ որ պէտք էր կատարել։ Նոքա լաւ գիտեն, որ ինչ որ մէկ մարդն անզօր է անել, շատ դիւրաւ կանուի՝ եթէ տասն, հարիւր կամ հազար մարդ միանան նոյն իսկ փորձի համար. միակ մարդն անզօր է, իսկ ընկերութիւնը հրաշալի զօրութիւն է, որ ամենայն ինչ ձեռնհաս է 'ի լրումն ածել, եթէ բոլոր անդամները հաւասար անձնուիրութեամբ, մէկ հաւատով յուսով, և սիրով առ մէկ որոշ նպատակ դիմեն։ Եւրոպայի արդի նիւթական և բարոյական յառաջադիմութեան ամենահզօր շարժառիթներէն մէկը—այդ հասարակ և պարզ, ամէն մարդու համար հասկանալի կանոնի գործադրութիւնն է։ Միթէ միայն մեր սիրելի հայրենակիցքն անընդունակ են այդ հասկանալու։

Առձեռն ունեցած Գերմանական օրացոյցէս ես կը տեսնեմ՝, որ Գերմանիոյ մէջ անթիւ ուսումնական, գրականական, բժշկական, առևտրական, տնտեսական, և այլ և այլ բարերարական և ուրիշ շատ ընկերութիւններէն զոկ, 2400-էն աւել ինքնօգնութեան վրայ հիմնուած փոխատու, սպառիչ անմիակ և մշակեալ ապրանքներու մատակարար ընկերութիւնք կան, որք մանր մանր գումարներ միացնելով, հարիւրաւոր միլիոններ կը կազմեն։ և այդ ահագին գրամագլխով յօգուտ ամենայն անդամոց գործ կը տեսնեն։ "Ինչ բան որ տասն տարի առաջ շատերուն միանգամայն անկարելի կը թուէր, միացեալ ոյժերու շնորհիւ յաջողութեամբ 'ի լրումն կ'ածուի այն օր", կըսէ գրքոյկի յառաջաբանը։ Այդ 2400 ընկերութիւններէն իւրաքանչիւրը իր առանձին որոշ կանոններն ունի, միւսներու հետ կը հաղորդակցուի, և վերջապէս ամենքը միասին "ընդհանուր Գերմանական ընկերութեանց միութիւն" անուամբ ընդհանուր կեդրոնական ընկերութիւն մի կը կազմեն, որն որ վերատեսչութիւն կ'անէ ամենքի վերայ, գործերու մէջ միութիւն կը մտցնէ, տարեկան ընդհանուր հաշիւներ կը տպէ, վերջապէս իր մասնաւոր լրագիրը կը հրատարակէ, և զորա միջոցով ընկերութեանց թիւը օրէ օր բազմացնելու կը ջանայ, և նոցա վերաբերեալ խնդիրներն և յառաջադիմութեան էական պայմանները բովանդակ աշխարհի կը պարզէ։

Գալով այժմ մանկավարժներուն, ես պէտք է ասեմ՝, որ ընկերակցական ոգին նոցա մէջ աւելի ևս արթուն է, և այդ ոգին է, որ արիութիւն կը տայ հեռաւոր գեղը նստած անհայտին. նա միակ է գիւղի մէջ, բայց բովանդակ մանկավարժական ընկերութեան աչքը հանապազ կը հսկէ նորա վերայ, և միջոցներ կ'որոնէ նորան 'ի թիկունս հասնելու։ Ամենայն օր գրեթէ,—կըսեմ այս առանց աւելորդաբանութեան, — հաստահատոր գրքեր, տետրակներ, թերթեր 'ի լոյս կընծայուին, որոց նպատակն է՝ մանկավարժութեան լայն ասպարէզի վերայ անդադար բարձրացող խնդիրները քննել դպրոցի բարեկարգութեան միջոցները գտնել, դաստուութեան նիւթերն արդի մանկավարժական պահանջմունքներուն յարմար մշակել, վարժապետներուն խրախոյս տալ, նոցա ընդհանուր նպատակը պարզել, և առհասարակ միութեան կապը հանապազ պնդելով, իւրաքանչիւր անդամին օգնութիւն մատուցանել։ Բաց 'ի այդ գրքերէն, 80 հատ միայն մանկավարժական՝ մասնաւորապէս մանկավարժական լրագիրներ կը հրատարակուին Գերմանիոյ մէջ, որոց նպատակը դարձեալ այն է —վարժարան և վարժապետ։

(Շ-ր-Ն-Է-Ի)